ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Հայ ազգային մեծ բանաստեղծն այնքան խորն է թափանցել իր ժողովրդի արվեստի բոլոր ճյուղերը, որ առատ նյութ է տվել այդ թեման գիտական հետաքրքրության առարկա դարձնելու համար։

Այդպիսի մի նախաձեռնություն էր հունիսի 30-ին արվեստի աշխատողների տանը կայացած գիտական նստաշրջանը, որ հրավիրված էր ԳԱ արվեստի ինստիտուտի և հայկական թատերական ընկերության նախաձեռնությամբ։

Նստաշրջանը բացեց ճարտարապետ Միքայել Մազմանյանը, որ բնութագրեց Թումանյանի տեղն ու դերը հայ արվեստում։ Նա մտաբերեց նաև, թե բանաստեղծը, իբրև հայ դրողների ընկերության նախագահ, ինչպիսի վարակիչ ներշնչումով ոգևորում ու քաջալերում էր մեր ազգային արվեստի գործիչներին՝ Թորոս Թորամանյանին, Ալեքսանդր Սպենդիարյանին, Գարեգին Հովսեփյանին և ուրիշների։

Նստաշրջանի առաջին զեկուցումը (Լ. Հախվերդյան, «Թումանյանի դեղագիտության հարցերից») նվիրված էր Թումանյանի դեղագիտական ըմբռնումներին։ Բանաստեղծը տարբեր առիթներով բազմիցս անդրադարձել է դեղագիտական այլևայլ հարցերի և հայտնել վերին աստիճանի ինքնատիպ մտքեր ու դատողություններ։ Դրանցից մեկն էլ ձևի ու բովանդակության հարաբերության խնդիրն է, որ նա արծարծել է այն տեսանկյունով, թե արվեստում ամենից կարևորն ու էականը, իհարկե, բովանդակությունն է, որ չի կարող գոյություն ունենալ ձևից անկախ, մինչդեռ «եթե միայն ձևը կա՝ ետ չի նշանակել, թե նա անպատճառ բովանդակություն էլ կունենա։ Ձևը կարող է և դատարկ ձև մնալ»։

Նստաշրջանի հաջորդ զեկուցումները վերաբերում էին հայ արվեստի տարբեր ճյուղերում Թումանյանի խաղացած դերին և դրված տեղին։ Թատերագետ Բ. Հովակիմյանի «Թումանյանը և հայ թատրոնը» զեկուցման մեջ, մեծաթիվ փաստերի վկայակոչմամբ, հաստատվում էր այն իրողությունը, որ թերևս ոչ մի հեղինակ այնքան չի ներկայացվել հայ բեմում, որքան Թումանյանը։ Նրա բազմաթիվ արձակ ու չափածո դրվածքներ, հատկապես խոշոր կտավները, տարբեր բեմավորումներով 1909 թվականից ի վեր ներկայացվել են հայ երաժշտական, դրամատիկական, մանկա-պատանեկան և տիկնիկային թատրոններում։ Դրա հիմքն այն է, որ այդ դրվածքներն ունեն դրամատիկական որակ և այդ մի յուրահատուկ ձևով դալիս է արդարացնելու Թումանյանի այն պնդումը, թե ինքն իր դրական խառնվածքով դրամատուրգ է. «Իմն են է՝ դրամա»։

Արվեստաբան Մ. Ղազարյանի «Թումանյանը և հայ կերպարվեստը» զեկուցումը ցույց տվեց բանաստեղծի վերաբերմունքը մեր ազգային կերպարվեստի ու նրա գործիչների հանդեպ, ինչպես նաև Թումանյանական երկերի նկարչական մեկնաբանությունների ավելի քան վաթսունամյա հարատև պատմությունը։ Չափազանց շատ են Թումանյանի երկերի նկարչական ձևավորման օրինակները, բայց դրանցից քչերն են, որ իրենց իմաստուն պարզությամբ ներդաշնակ ու համարժեք են այդ երկերին։

Կինոտեսաբան Ս. Հասմիկյանի զեկուցման («Թումանյանը հայ կինոարվեստում») մեջ ևս Թումանյանի երկերի էկրանավորումների բավական մեծ շարքում քիչ բան համարվեց անվերապահ գնահատության արժանի։ Ամեն անդամ, երբ կինոյի աշխատողները հեռացել են բանաստեղծի գեղարվեստական մտածողությունից՝ հանգել են ինքնահնար ու սխեմատիկ լուծումների։ Մինչդեռ, ընդհակառակը, հաջողությունը նրանց ուղեկցել է այն դեպքերում, երբ նրանք հետանդել են կինոարվեստի միջոցներով Թումանյանական կերպարները հարազատորեն բացահայտելու նպատակը։ Դրա օրինակներն են «Շունն ու կատուն» և «Գիքոր» առաջնակարգ կինոնկարները։

Չափազանց շատ են Թումանյանի այն երկերը, որ մարմնացում են գտել մեր ազգային երաժշտության մեջ։ Դրանցից ամենակատարյալը, թերևս, Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան է, որին և նվիրված էր երաժշտագետ Լ. Տեր-Մինասյանի զեկուցումը։ Թումանյանի պոեմի և օպե-

բայի միջև կատարած զուգահեռներով գեկուցողը ցույց տվեց, թե տաղանդավոր կոմպոզիտորն ինչպիսի երկյուղածությամբ և պոեմի ժողովրդային ոգու նուրբ զգացողությամբ է կատարել «Անուշին» երաժշտական սարմնավորում տալու գործը։

Նստաշրջանը վերստին վկայեց, թե մեր ազգային մեծ բանաստեղծը ինչպես է թափանցել հայ արվեստի ոլորտները և գա ինչպիսի հետաքրքիր ասպարեզ է արվեստաբանական ուսումնասիրության համար։

Լ. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՓՆԵԿԻՐԸ

Հուլիսի 2-ին, Օշականի Մեսրոպ Մաշտոցի անվան դպրոցում գումարված ՀՍՍՀ ԳԱ Նախագահության ընդլայնված նիստում, Հանրապետության գիտական հասարակայնության ներկայացուցիչների և Աշտարակի շրջանի ու Օշականի մտավորականության և բնակչության ներկայությամբ, հանդիսավոր պայմաններում, տեղի ունեցավ Հայագիտական լավագույն աշխատության համար սահմանված Մաշտոցյան մրցանակի հանձնումը անվանի հայագետ, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Լ. Ս. Խաչիկյանին։

Հիշյալ գիտական մրցանակը շնորհվում է յուրաքանչյուր հինգ տարվա ընթացքում հայագիտության բնագավառում կատարված առավել ուշագրավ ու ծանրակշիռ աշխատության համար։

Այս առումով էլ դժվարին և պատասխանատու խնդիր էր դրված ՀՍՍՀ ԳԱ հասարակագիտական բաժանմունքի բյուրոյի առաջ, ներկայացված մի քանի, իրենց նշանակությամբ մեկը մյուսին չզիջող, գործերից ընտրելու առավել կարևորն ու հայագիտության մեջ խոշոր ներդրում հանդիսացող աշխատությունը։ Զայների մեծամասնության կենտրոնացումը Լ. Ս. Խաչիկյանի «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» եռահատոր աշխատության օգտին, գալիս է վկայելու, որ ԳԱ հասարակագիտական գիտությունների բաժանմունքը ըստ արժանվույն է գնահատել սովետահայ պատմագրության վերջին տարիների կարևոր նվաճումներից մեկը հանդիսացող այդ մեծարժեք աղբյուրագիտական աշխատությունը, և պատահական չէ, որ գնահատականը հավանության արժանացավ մեր հանրապետության գիտական հասարակայնության և ընդհանուր հայագիտական շրջանակների կողմից։

Ձեռագիր հիշատակարանների հավաքման և դրանց բնագրերի գիտական հրապարակման գործով Լ. Ս. Խաչիկյանը զբաղվել է շուրջ երկու տասնամյակ։ Տարիների համառ ու քրտնաջան բնագրագիտական աշխատանքների առաջին արդյունքը 1950 թ. լույս տեսած «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ստվար հատորն էր, որից հետո նա անմիջապես ձեռնամուխ եղավ առավել կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեցող ԺԵ դարի հիշատակարանների հավաքման մեծ ու դժվարին գործին։

15-րդ դարը իրավամբ դիտված է որպես հայկական ավատատիրության եզրափակիչ դար։ Ուստի հասկանալի է, որ մեր ժողովրդի վերջին հարյուրամյակների պատմական ճակատագրի սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալների բացահայտման բանալին պետք է փնտրել այն բախտորոշ իրադարձությունների և քաղաքական վայրիվերումների մեջ, որոնք եկան վերափոխելու երկրի սոցիալ-քաղաքական ու էթնիկական պատկերը և որոնց շնորհիվ հայ աշխարհիկ ավատատիրական դասը դուրս մղվեց ասպարեզից՝ որպես որոշակի քաղաքական ուժ։

Քաղաքական դժնդակ պայմանների և տնտեսական ու մշակութային կյանքում առաջացած ծանր, անկումային վիճակի հետևանքով վրա հասած հայ պատմագրության գրեթե ամուլ այս շրջանում, ձեռագրաց հիշատակարանները աղբյուրագիտական բացառիկ արժեք են ստանում։ Այս իրողության գիտական խորը հավաստումը տվեց Լ. Խաչիկյանը իր եռահատոր հրապարակումներին առընթեր կատարած ընդարձակ ու բազմակողմանի ուսումնասիրությամբ։ Շարադրվեց հայ ժողովրդի ամենամութ և միաժամանակ ամենասակավ ուսումնասիրված շրջանի պատմությունը, որը կայուն հիմք է հանդիսանում հետագա դարերի պատմության մի շարք բարդ ու հանգուցային հարցերի լուսաբանման համար։ Կատարված է պատմության այդ ժամանակահատվածի սպառիչ ուսումնասիրությունը։ Գիտական շրջանառության մեջ են դրված եզակի արժեք ներկայացնող միանգամայն նոր նյութեր, որոնց աղբյուրագիտական նշանակությունը դուրս է գալիս հայագիտության սահմաններից՝ ճանաչվելով և բարձր գնահատականի արժանանալով ընդհանուր արևելագիտական շրջանակներում։